

Կանոնագրության

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

Ե Ռ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ԹԻՐ 38



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ هانراكيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 38 || 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

ՊԱՏԿԵՐ ՑԱՆԳԱԻՈՐ

Ա.

Գարնան օր մ'առտուն
Անձառամ տուտուն
— Պառաւ կին մը ծեր—
Գործի ելած էր:
Սօժտուած ձեւեր,
Գոգնոցը կապուեր,
Շունչով հեւ ի հեւ
Տաշտի մը առջեւ
Նստած կոկոզուկ
Իրբեւ մի ձգուկ
— Թէեւ ալեհեր —
Խմոր կը ձրէր:
Բակին մէջ միակ
Քանի մը վառեակ
— Սոսկ իրեն համար
Ընկերներ յարմար —
Կը կտկտային
Քովիկը տաշտին:

Բ.

Մեր տուտուն, սալայն
Թէեւ ծեր այնքան,
Անլուր չէր մնար
Ձայներուն օտար:
Միշտ հետաքրքիր
Փափաք մ'ու զրգիւ
Թարմ կը մնար դեռ
Սրտին մէջ անմեռ:
Այսպէս ծնկաչոք
Երբ շաղուէր անհոգ
Խառնելով ջուրն ու
Ալիւրն իրարու,
Դրան առջեւէն
Դանդաղկոտօրէն



Անցնող կառքերուն
Տեսքէն շմորուն,
Կը խորհի մօտէն,
Սանկ քիչ մը ատեն,
Դետել կառքերուն
Անցքը երեւուն:
Մէկ մ'ալ մեր տուտուն
Ձեռքով թաթախուն
Տեսնէր շիփշիտակ
Դուրսը պատին տակ
Կանգնած կը դիտէ
Իմանալու թէ
Այս անցորդներէն
Որո՞նք ծանօթ են,
Ուրկէ՞ ուր այսքան
Շուտափոյթ կ'երթան:

Գ.

Մինչ այսպէս կանգուն
Անձառամ տուտուն
Հին տարեկցի մի
Հետ բերան բերնի
Խօսքի բռնուի,
Վառեակներն բարի
Միամտօրէն
Կը շարունակեն
Իրենց տուտուն,
— Իրը սիրոյ անգին
Նշան անմոռաց —
Կիսատ խոզուցած
Խմորը ձրել՝
Դուն ըսէ շաղուել:
Ոտքով ձեւերով
Եւ ամբողջ մարմնով
Ժիր գործի մէջ են,
Ձեն ելլեր մէջէն:

Դ.

Մինչեւ որ տիկին
Կը դառնայ կրկին.
Եւ ի՞նչ ծուռ ժանիք
Երբ մէկիկ մէկիկ
Վառեակներն ծագուկ
Կը հանէ խեղճուկ,
Որոնք արեւուն
Անշուշտ կ'սպասեն



Որ իբր փոխարէն
Իրենց ջանքերուն
Ոյնքան եռանդուն,
Անթառամ տուտու
— Դէմքով մը թնու —
Շաղուած խմորէն
Կորէն ու նորէն,
Հանէ անպատճառ
Բաժիններ արդար,

ԱԿԻՒԼԻՆԷ

ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շար. 36րդ թիւէն)

ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ

Սահմանը. — Մթուքեան կամ խրթնութեան այլ եւ այլ պատ-
ճառները. — Բռնագրօսիկ կամ պատ ի պատ բացասութիւններ. —
Շրջում (inversion)

Պայծառութիւնն կամ Յասակութիւնն է յայտնապէս ոճին բոլոր
յատկութեանց մէջ ամէնէ աւելի առաջին ու էականը: Արդ՝ մարդ
իր միտքը կրնայ հասկնալի ընել մի միայն ճիշտ ու ճշգրիտ կեր-
պով բացատրելու յստակ կամ պայծառ ոճ մ'ունենալու պայմանով:
Աւելի ամփոփ իմաստով՝ ոճին պայծառութիւնը կամ յսակու-
թիւնն այն յատկութիւնն է որով առ ետեղ (sur-le-champ) այս-
ինքն անդէն եւ անդ, ու առանց ճիգի՝ կ'ըմբռնէ մարդ խօսով
բացասուած մտածումը: Բայց պայծառ կամ յսակ ըլլալու համար՝
պէտք է նիւթին տէրն ըլլալ, աղէկ գիտնալ ինչ որ ըսել կ'ուզէ
ու է մէկը, որովհետեւ մտքի արտայայտութեանց օրէնադիրներն
ըսած են թէ « Գրելէ առաջ մտածել սորովէ. մեր յղացած կամ
արտայայտելիք աւելի կամ նուազ միջին գաղափարներուն համ-
ընթաց կ'քալէ աւելի կամ նուազ ճիշտ ու ճշգրիտ բացատրու-
թիւնը. ինչ որ աղէկ կ'մտածուի պայծառօրէն կամ յստակօրէն
կ'իմացուի, և միտքն հասկցնող բառեր շատ դիւրին կամ հեշտիւ
կ'հասնին գրչին տակ կամ մտքին մէջ »: Ինչ որ ըսած է Փրան-
սական կաճառին անդամակից եւ ժէրդ. դարու արձակագիր թէ
տաղաչափագիր, գերազանցապէս երգիծարան բանաստեղծ Պուա-
լօն իրմէ առաջ արդէն շատ հեղինակաւոր իմաստով բացատրած

է Ովրատիոս, զոր հայ Պառնասին կամ Հայ դրականութեան ճշմարիտ հիմնադիրն Հայր Արսէն Բագրատունին, մեր բոլոր նախնիքն, սկսեալ Աստուածաշունչի թարգմանիչ Ս. Սահակէն ու Ս. Մեսրոպէն մինչեւ Շնորհալին ու Լամբրոնացին, իր մէջ, իր ովհիան մտքին մէջ, իր ամենորակ գրչին տակ, գրաբար Հայերէնն անհամեմատօրէն անձնաւորող հսկայ Հայկաբանը, տիեզերական ու մշտնջենի հիացման արժանացող Հելլէն Հոմերոսէն, Լատին Վիրգիլիոսէն, Անգլիացի Միլտոնէն, Իտալացի Տանդէէն ու Թասօն, Ֆրանսացի Վոլդէրէն, Փորթուկալցի Գամօէնսքիէն յետոյ՝ նշանաւոր Հագներգուն կամ Դիւցազներգալը:

Ոճին յատկութեան խութերէն մին է իրթնութիւնը կամ Մթագնութիւնը (l'obscurité) որ առաջ կուգայ ըսելու կամ գրելու կերպին (ոճին) մէջ զարդարանքներն ու վերադիրները շատ չռայլօրէն գործածելու մոլութենէն, տարտամ, անորոշ, երկդիմի և պատիպատ բացատրումներէն, քերականական բռնաղբօսիկ շրջումներէ, խօսքին անյարմար ու անյարիր դարձուածքներէ և չափազանցօրէն շատ երկար կամ չափազանցօրէն բազմապատկուած տողընդմէջ (parenthèses), շեղակի ու նիւթէն դուրս միջանկեալ ասումներէ:

Տողընդմէջ մը սովորաբար շատ կարճ տող մը խօսք է՝ նետուած ուրիշ տող մը խօսքին մէջ որուն հետ միմիայն իմաստով կ'յարաբերի կամ կ'վերաբերի, ինչպէս Ռասինի սա երկտող ոտանաւորին մէջ.

« Երազ մը (խռովելո՞ւ էի երազէ մը)

« Կ'սնուցանէ իմ սրտիս մէջ զայն կրծող վիշտի մորմոր մը:

Յայտնի է թէ տողընդմէջ բացատրութիւն մը շատ բնական է, սակայն շատ ալ դիւրին է հասկնալ թէ երբ այս տեսակ ասուածքի ձեւեր յաճախ կրկնուին գրուածքին մէջ հարկաւորապէս կ'մթագնեն ոճը չիփթելով խօսքին կամ նիւթին զլիաւոր ի մասսը պատահականին հետ: Բիգար՝ որ 1828 տարին մեռած Ֆրանսացի գուսաներգու (dramatique) հեղինակ մ'է, կատարելապէս ի վեր կը հանէ ոճի այս ծանր անպատշաճականը, այսինքն գլխաւոր իմաստին հետ աւելորդօրէն վերաբերող տող ընդ մէջ ճապաղ ու խառնաբնդոր բացատրութիւններ խառնելու, զայն մթնցնելու և անհասկնալի ընելու չափ հում ու խակ մտածելու կերպը: Պարապոյղներ վերնագրով յօրինած են սիրուն, զմայլուն կատակերգութեան մէջ սա հետագայ տողերով.

« », իմ սիրելի թրիւշմէնս, ա՛հ, սակայն արդարեւ
« Դուք կը բնակիք այս տունը. ես հոս եկած եմ այնքան յա-
« ճախ երբ ասոր կալուածատիրուհին էր որբեւայրի մը, որուն

« ամուսինն էր հեծելագորաց գունդի մը զօրավարը , շատ աղւոր
 « մարդ մը , աղւոր ըսի , այս զօրավարն ունէր դէմքին վրայ
 « լայնախոց վէրքի մը երաշխէպը . այս թերութիւնն ալ գործած
 « էր թղթատար կառապան մը , որ զօրավարը կառքէն վար գլո-
 « ռեց դէպի ժընէվ ըրած ճամբորդութեան մը միջոցին , եզերքն
 « այն լճակին ուրկէ կ'որսացուին կամ կ'եղնէ անուշ ջուրի այն
 « աղւոր ու ընտիր փափկաճաշակ ձուկերը . շատ համադամ կե-
 « ղակուր մ'են ասոնք , սակայն ես Հռենոս գետին ձուկերն ա-
 « լելի նախամեծար կը համարիմ » :

ԱՐՄԷՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՀԵՆ ԵՐ ՆՈՐ ԱԶԳԵՐՈՒ

Բ.

ՀՆԴԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս ամէն ժողովրդոց , նոյնպէս ալ Հնդկի ազգին խառն
 և գլխաւոր գիրքը , մեր Սուրբ Դրոց պէս , սրբազան օրինագիրք
 մըն է կրօնական եւ ընկերական : Այս օրինագիրքը Ն. Ք. 1500
 տարի առաջ Վիաչչա անուն իմաստունին ձեռքով կը հաւաքուի ,
 կը կարգադրուի եւ Վէսա անունը կ'ընդունի , ինչպէս կը կոչուի
 ցարդ եւ որ կը նշանակէ գիտութիւն , ծանօթութիւն :

Վէսաները չորս հատ են . Ռիկ-Վէտա , հաւաքածոյ երգերու ,
 Նախիւր-Վէսա , Սամա-Վէսա , որոնք զոհերու ատեն արտասան-
 ուելիք աղօթքներ կը պարունակեն , եւ Աքարվա Վէսա որ նուի-
 րագործութեան , քաւութեան եւ անէծքի վերաբերեալ աղօթք-
 ներ եւ ընթերցումներ կը պարունակէ : Այս վերջինը աւելի վեր-
 ջերը պատրաստուած գործ մ'է :

Պէտք է գիտնալ թէ Վէտաներու լեզուն դասական Սանսկրիտ
 լեզուէն կը տարբերի , այս վերջինը բաղդատաբար աւելի նոր ըլ-
 լալով , ինչպէս որ Հոմերոսի լեզուն կը տարբերի Քսենոքոնի լե-
 զուէն :

Վալմիֆի, Հնդիկ Հոմերոսը, որ նոյն ժամանակներու մէջ շար-
ժած է իր գրիչը, իրեն կ'ընծայուի Ռամայանա անուն գիւցագ-
ներգութիւնը, որ կը պատմէ Ռամայի քաջագործութիւնները եւ
յաղթութիւնը Ռամկա հսկային վրայ որ Սէշլանի մէջ կ'իշխէր:

Վիաչչա միայն իր նախորդներու գործերը չհաւաքեց, այլ
գրեց նաեւ գիցազներգութիւն մը՝ Մահա Պարադա «Կռիւ Պա-
րատեանց» անուն, 250 հազար տողէ բաղկացեալ որ գրական
աշխարհին մէջ նշանաւոր յիշատակարան մը կը նկատուի:

Մանու, օրէնսդիր Հնդկաց, որ Քրիստոսէ յառաջ ժ. կամ ժ.Ա.
դարու մէջ ապրած ըլլալ կը կարծուի. տաղաշափուած նշանաւոր
օրինագիրք մը գրած է՝ Մանավա-Տարմա-Սաստա (օրինագիրք
Մանուի) կոչուած:

Բանասիրութեան մէջ նշանաւոր է Բանիճի պրահմանի քերա-
կանութիւնը որ շատ հին գործ մըն է:

Սիւբա Շաստրա (արուեստներու մասին գրուած) որ արուեստ-
ներու վրայ ընդհանուր վարդապետութիւններ եւ մասնաւոր նկա-
րագրութիւններ կուտայ:

Բուրանա (պատմութիւններ), խառն իրականութեամբ եւ կեղ-
ծիքներով մեկնութիւններ Վեքաներուն վրայ:

Վարդապետական ճիւղին մէջ կան շատ մը հնդիկ գիտուններ
որոնց մէջ նշանաւոր է Կոդամա, յօրինած է կարգ մը դրութիւն-
ներ որոնք Արիստոտէլինէն շատ չեն հեռանար եւ որոնք Սուստա
կը կոչուին:

Թաստեական սեռին մէջ կը գտնենք շատ մը երկասիրու-
թիւններ որոնց մէջ կը տիրեն զգացում եւ երեւայութիւն. Սա-
մուդրա անուն սքանչելի թատերգութիւնը ամէնէն ժողովրդ-
դականն է: Մաքքաքադրի ալ գրած է Սալ մանկան անուն թատ-
երգութիւն մը որուն հետեւողութիւն մ'ըրած է Ժէրար աը Նէր-
վալ Ֆրանսաչին:

Վիպական սեռին մէջ Տաչա-Քումարա յորջորջուած հաւաքա-
ծոն զարմանալի ճոխութեամբ գրուած վէպ մ'է:

Վերջապէս առակի մասին որ էապէս արեւելեան ձեւ մ'է գը-
րագիտութեան, Հնդկաստան ամէնքը կը գերազանցէ:

Հինso-բաթեզան սանսկրիտ լեզուով գրուած առակներու հա-
ւաքածոյ մ'է որ կ'ընծայուի Բիլբայի մատենագրին եւ որ պարս-
կերէնէն յունարէնի անցներով մինչեւ Լաֆօնդէնի դրչին նիւթ ե-
ղած է մասամբ:

ՆԱԽԹԻ ՀՈՐԵՐ

Բնութիւնը երբէք չգաղտնի դասեր տալու հպարտ մարդուն՝ որ կը կարծէ գտնել անոր բիւրաւոր գաղտնիքներն, և միշտ մայր բնութիւնն անոր տկարութեան առջև կը դնէ իր զօրութեան և կարողութեան նորանոր հրաշալիքներն:


Երբէ՛ք տարբերութիւն մը չես տեսներ Ամերիկայի ու Կովկասու քարիւղի հանքերուն միջև: Ջրային աւազաններու, կատաղի հեղեղներուն, կանաչաւետ անտառներու և ճոխ երկրին փոխաբէն կը պատկերանայ աչքիդ առջև յաւիտենական հրոյ երկիրն, որ, ամայի ու կարծրացած է արեգական կիզիչ ճառագայթներուն ներքեւ: Մենք առ այժմ մէկ կողմ թողլով Ամերիկայի Բենսիլ-վանիոյ նահանգին քարիւղի հանքերուն նկարագրութիւնն, կ'ուզենք խօսիլ Կովկասու քարիւղի, մասնաւորապէս Պաքու նահանգին արտադրած քարիւղին և հանքերուն նկարագրութիւնն ընել՝ հանդերձ զանազան մանրամասնութիւններով:

Պաքու քաղաքն, որ ի հնումն կը կոչուէր Բագաւան, Կասպից ծովուն հարաւային ծովեզերքը կառուցեալ է, գեղեցիկ ծոցի մը վրայ, և ունի գեղեցիկ նաւահանգիստ քաղաքին և երկու կղզիներուն միջեւ, գրեթէ Պոլսոյ նաւահանգիստին նման: Ամբողջ Կովկասի մէջ Պաքու՝ միակ քաղաքն է ուր քամին, հիւսիսային հովն իր ամբողջ զօրութեամբ կը տիրէ տարուան 12 ամիսը: Ամառուան տաքը որ հեղձուցիչ է, շնորհիւ այդ քամիին՝ քիչ մը կը բարեխառնի, եթէ ոչ Պաքու՝ անբնակելի քաղաք մը պիտի ըլլար: Կ'ըսուի թէ՛ Պաքուի նշանաւոր քամին Օպիի անապատէն կը փչէ, և արդէն նոյն իսկ Պաքու՝ կը նշանակէ քամիի քաղաք, պաշտ և զուման բառերէն կազմուած:

Երկիրը բարձր և քարուտ է, իսկ կլիման լաւ, տօթագին ու անուշ: Այս յաւիտենական հրոյ երկրին մէջ, ուր խռնուած են այնքան թանկագին գանձեր, կարծես թէ՛ մարդը գատապարտեալ մըն է ամէն ինչ ընելու, ամէն ինչ գործադրելու համար, եւ սոյն բնական հարստութիւններուն քով, զարմանալի՝ հակապատկեր, չես կրնար գտնել երկնից ջուրէն կաթիլ մը, այնքան անհրաժեշտ ծարաւի շրթունքները զովացնելու համար:

Այս տարօրինակ երկրին մէջ, քարիւղը ջուրի նման կը հոսի, և ջուրը հագուագիւտ է: Պաքու քաղաքին մէջ ջրանցքներու դրութիւնն մը կայ, ինչպէս որ կը գտնուի Բարիզի մէջ՝ քաղաքին ջուրերուն համար, բայց Պաքուի ջրանցքները սա տարբերու-

Թեամբ կը գտնադռնին որ Սեւ Բաղաբին մէջ կը բերեն Պալաքանի ջուրերն, որ Պաքուի Հիւսիս-արեւելեան կողմը նաւթաբեր գիւղ մըն է: Իսկ ջուրը, որ ամէնէն յօգտակար պէտքն է մար-



Նավթաբեր գիւղի մէջ եղած նաւթադրոշմը

դուն, Թաթարներուն ձեռքով կը բերուի Իւրաքանչիւրին բնակարանը:

Կովկասի քարիւղը կարելոր է ճարտարութեան և վաճառականութեան տեսակէտով, Ամրող Կովկաս, մասամբ իր շքեղութիւնը կը պարտի քարիւղին:

Պաքուի մէջ քարիւղի շահագործման յատկացեալ թաղը, կը կոչուի Սեւ քաղաք, որ այդ նկարագրական անունին ստուգիւ արժանի է, և արդարեւ այդ թաղին մէջ կը գտնուին 200ի մօտ ընդարձակ հաստատութիւններ, վաճառատուններ իրարմէ նեղ փողոցներով բաժնուած: Հազարաւար ծխնելոյղներէ, խողովակներէ գիշեր եւ ցերեկ ծուխը կ'ելլէ ոլորապտոյտ, և այս տեսարանը աշխարհի վրայ կրնանք ըսել թէ՛ իր նմանը չունի: Լիվրբուլ և Մանչէսթըր, որոնք այնքան ճարտարարուեստի ու գործօն քաղաքներ են, և ուր ամէն մէկ քայլիդ կը հանդիպիս կամ մեքենայի մը և կամ գործարանի մը, նոյն տեսարանը չեն ընծայեր բնաւ: Ամէն բան քաղաքին մէջ սեւ, տղիւթաթաւ և աղտոտ ու իւղոտ է: Շէնքերն, որմերն, քարափներն, նաւերն, փողոցներն, խողովակներն, գործաւորներու հանդերձներն, ամէն ինչ վերջապէս աղտեղի ու իւղոտ է: Կարծես թէ՛ Պաքու կը հաղորդակցի ստորերկրեայ ճամբաներով ընդարձակ ովկիանոսի մը հետ, որու ջուրերը իբր թէ կազմուած ըլլան տարրագիտական բաղադրութիւնով մը:

Կովկասի մէջ, ամէնուրեք քարիւղի հանք կայ, առ ծակիչ գործին, ջրհոր մը բաց և խկոյն դուրս պիտի ժայթքէ թանձր իւղի հոսանք մը: Հեղուկ ածուիւն է, բարերար քարիւղն է, որուն համար կրնանք ըսել թէ՛ Կովկասի մէջ ամեն սեղ ներկայ է: Եւ որովհետեւ աղքատ գէրծաւոր մը՝ մէկ վայրկենի մէջ կրնայ միլիոնատէր ընել, ինչպէս օրինակները շատ կան, և ընդհակառակն միլիոններու տէր հարուստ մը, կարճատեւ ժամանակի մէջ՝ իր հարստութիւնները կրնայ կորսնցնել՝ եթէ երբէք բաղդը չը ժպտի իրեն:


Քարիւղը առողջապահական տեսակէտով ալ իր միասներն եւս ունի, օդը կ'ապականէ. անոր գարշ հոտը միշտ կենսական միասներ կ'սպառնայ գործաւոր բնակիչներուն: Ամբողջ երկրին մէջ, ուր միլիոնաւոր բուսկիներ կը փայլին քարիւղի վաճառականութեան շնորհիւ, ի գուր կը փնտռես ծառ մը, տերեւ մը և կամ վարդ մը, այլ միայն տղմաթաթաւ փողոցներ եւ իւղի աւազաններ կը տեսնես:

Պաքու ասկէ գրեթէ 40 տարի առաջ 8000 բնակիչ ունէր, իսկ այժմ 70—80,000 կը հաշուուի, որոնք զանազան ազգերէ կը բաղկանան:

Հայերն ունին երկու եկեղեցի, հինն ու նորը: Այս վերջինն որ բաւական մեծ է, Ս. Լուսաւորիչ անուամբ, կը նմանի քիչ մը Պոլսոյ Գառը գիւղի Ս. Թադեւոր եկեղեցիին: Սքանչելի և հոյակապ վարժարան մը ունին, որուն համար 20 հազար ոսկի ծախք

եղած է, կ'ըսուի. ո'չ մէկ տեղ հայերն այսպիսի դպրոցական շէնք ունին:

Պարոյի վաճառականներ բազմաթիւ են և հայերուն հետ հաւասար կը փայլին իրենց անհուն հարստութեամբ: Պաքուի ամէնէն հարուստը Թաղիէնց պարսիկն, որ տէր է քաղաքին մեծ



Գետերու վրայ լիստերով նաւի փոխադրութիւն

շէնքերուն. թատրոնին և միակ լրագրին՝ Կասպի անուամբ:

Պաքուի չորս կողմերը կը տեսնուին հին պատեր, ամրութիւններ, հին շէնքեր. հրոյ տարուչաններ, որոնք հին պարսիկներէն մնացած են: Պարսիկները վերջին ծայր մեկուսացեալ և ջեռմուսնդ են եւ ուրիշ փոքրերու հետ չափ չեն խառնուիր. իրենց առանձին բաժանումներն ու բնակավայրերն ունին:

Պաքու քաղաքն այժմու վաճառականական եւ արուեստական յառաջադիմութիւնը կը պարտի քարիւղին. առանց անոր Պաքու՝ աննշան քաղաք մը պիտի մնար Կասպից ծովուն եզերքներուն վրայ:

1806ին, երբ Պարսիկները թողուցին Պաքուն, գրեթէ անկարելորդ քաղաք մ'էր, ուր կային սակաւաթիւ Թուրք, Հայ, Պարսիկ, կրակապաշտ Հնդիկներ: Այս վերջիններուն սրբազան քաղաքը կը համարուէր երկիրն, որովհետեւ այն տեղ կառուցած էին ատրոքչաններ (կրակի տաճարներ), որուն մէջ մշտապէս կը մնար քարիւղի նիւր, եւ Պարսկապետանէն, Հնդկապետանէն հազարաւոր կրակապաշտ ուխտաւորներ կուգային Կրակ-Աստուծոյն երկրպագելու: Ասոնց վրայ վերջէն պիտի խօսինք:

Այն ժամանակները, քարիւղը գրեթէ ոչինչ համարում ունէր, առանց զտելու կը վառէին, որ անտանելի հոտ կը բուրէր: Բալախանցի թուրքերը առաջին անգամ փորեցին խորունկ փոս մը, և դոյլերով քաշելով կը վառէին: Տեղացի Հայերն ալ հորեր բանալ սկսան և երկար ատեն շահագործեցին, բայց այնքան անկատար, թերի ու յետնեալ մէթոտներով, որ իրենց արտադրութիւնն յարգ չգտաւ, տեղային սպառում միայն ունեցաւ, և օտարազգիները երբ քարիւղի մը համար զեռ քարիւղ է, ըսել ուզէին, ռուսական է, կ'ըսէին: Սաստիկ գարշահոտ, թանձր դեղնագոյն, և երբեմն երբեմն պայթող ու լամպարը ճաթեցնող հանգամանքներով օժտուած:

(Շարունակելի)

ՏԵՎԵՆԻՆ ՍՊԱՍՈՒԷՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

(Շարուն. 37րդ Թիւէն)

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՇՈՒՇԱՆ՝ առանձին, յետոյ ԱՐԱՔՍԻ և ՍԱԹԵՆԻԿ

Շուշ. — Կեցցէ՛ զուարճութիւնը... Տիկ. Հռիփսիմէն բարկացուցի, զլուխ ցաւցնող կնիկէ մըն ալ ազատեցի զինքը, և ինքզինքս Փառանձեմ անուան ներքեւ ատել տուի և Շուշան անունով ալ փնտռել տուի: Օ՛խ, ի՛նչ աղւոր անցուցի օրս: (Կը մտնեն Արաֆսի և Սաք.):

Սաք. — Բայց ի՞նչ կայ որ:

Արաֆսի. — Հիմա ճամբան մօրաքրոջս հանդիպեցանք որ Տիկին Արշալոյսին հետ կը վիճաբանէր:

Շուշ. — Ձեզի բան մը ըսա՞ւ մօրաքրոյրը:

Սաք. — Ըսաւ թէ մենք երթանք ճաշենք առանց իրեն, յետոյ շարունակեց խօսիլ Տիկ. Արշալոյսին հետ որ կարծես թէ բարկացած էր և բնաւ խօսք չէր ուզեր հասկնալ: Ըսէ՛ մեզի ասոնց ամէնուն ալ պատճառը:

Արաֆսի. — Նորէն դուռն ըլլալու ես պատճառը:

Շուշան . — Ուրիշ ո՞վ կրնայ ըլլալ : Պէտք է քիչ մը զբօսնուլ... Ձեզի չըսի՞ որ շատ պիտի զուարճանանք : Ինչո՞ւ ուշ հասաք , քիչ մը առաջ գալու էիք : Տիկ . Արշալոյս կ'ուզէր որ զինքը ճաշի հրաւիրէինք և մօրաքոյրն ալ չէր ուզեր : Ըրի չըրի Տիկ . Հռիփսիմէ ստիպեցի որ հրաւիրէ Տիկ . Արշալոյսը . Յետոյ երբ Տիկ , Արշ . իր անօթի ստամոքսովը եւ իր ձագուկը կը պատրաստուէին կերակուրը պատուել՝ ես նորէն մէջ մտայ և իմ այս միջամտութիւնս առաջ բերաւ այն արդիւնքը որուն կ'ապաստէի , Տիկ . Արշ . բարկացաւ ու սրի ողեցաւ , Տիկ . Հռիփս . ալ ներողութիւն խնդրեց , պզտիկ Հրաշխան ալ լացաւ և ես այնքա՛ն զուարճացայ որ... և տեսաք թէ այսքան զուարճութիւնը շատ սուղ չարժեց : Այսչափ աշխատութիւնն ալ կարծեմ մատ մը գինի կ'արժէ զոր հիմա պիտի խմեմ ձեր հրամանովը Տիկին Արշալոյսին պարապ ստամոքսին կենացը , որ խեղճը անօթի՝ անօթի՝ ելեր եկեր էր հոս կշտանալու համար (Սեղան կը նստի , Գառնիկ կը մննէ ներս եւ ճաշը կը բերէ գաւաթ մը օտարակով , (գինիի գոյն) . խեղճ կին , զինքը չէ որ կը մեղքնամ , այլ իր խեղճ ստամոքսը : Իրաւ որ զուարթութիւնը ախորժակ կը բանայ :

Արաքսի . — Շուշա՛ն , Շուշա՛ն :

Շուշ . — Ես Շուշան չեմ , ես Փառանձեմ եմ :

Արաքսի . — Վերջը աղէկ պիտի չըլլայ :

Շուշ . — Ատ ես ալ գիտեմ : Շատ պիտի բարկանայ մօրաքոյրը և այս անգամ վստահ եմ թէ՝ մէյ մըն ալ կեանքին մէջը սպասուհի չպիտի առնէ քովը : Արդէն խեղճը կ'ողբայ Շուշանին վրայ որ , աւա՜ղ , թեւերը և ոտքերը ջախջախեց... (կը խմէ) Շուշանին կոտորած թեւերուն եւ ոտքերուն կենացը... Ա՛հ այսօր այնքան ուրախ այնքան զուարթ եմ որ ձեզի՝ պզտիկ երգ մը պիտի երգեմ , եթէ կը հաճիք : Մտիկ ըրէք :

(Կ'երգէ դաշնակի ընկերակցութեամբ լաւ երգի մը Ա . տունը)

(Սաքենիկին) Օ՛ն , օրիորդ , սա խորովածէն քիչ մը հրամեցէք... խեղճ Տիկին Արշալոյսին բաժինն էր ասիկա . արդեօք որքա՛ն համով պիտի գտնէր զայն . (քիչ մը ցած ձայնով) կարծես թէ ես չէի կրնար ուտել : (Կ'երգէ Բ . տունը)

(Արաքսիին) Օ՛ն , օրիորդ , կաթիլ մը սա պատուական գինիէն խմեցէք . խեղճ Տիկ . Արշալոյս , արդեօք որքան համեղ պիտի գտնէ՞ր...

(Կ'երգէ Գ . տունը եւ վերջանալէն անմիջապէս յետոյ Տիկ . Հռիփս . ներս կը մննէ)

Թ. ՏԵՎԱՐԱՆ

ՆՈՅՆԲ ԵՆ ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԷ

Տիկ. Հո. — Ի՞նչ է աս, քեռորդիներու հետ աեղանք նստեր ես... Ա՛հ, անքաղաքավար մը քեզի...

Շուշ. — Տիկին, ձեր բարկանալն էր որ ախորժակս բացաւ:

Տիկ. Հո. — Դեռ կը խօսի... (Գաւազանք կը վերցնէ Շուշեանին գլխուն վրայ, որ ձեռքի պիակը վար կը ձգէ): Ա՛յ, պնակս կոտրեց, տունս տակն ու վրայ ընելէն գոհ չեղաւ ու տակաւին պնակներս ալ կը կոտրէ... գաւազանիս տակը պիտի կոտրեմ ոսկորներդ (կը վերցնէ գաւազանք):

Շուշ. (թելք բռնելով). — Բայց ես ի՞նչ ըրի որ, Տիկին:

Տիկ. Հո. — Ալ ի՞նչ պիտի ընես, չըրածդ մնաց որ: Ես քեզի հրամաններ կուտամ եւ դուն անոնք չես կատարեր եւ տակաւին կ'ելլես կ'ըսես թէ բան մը չըրիր: Ինծի այցելութեան եկողները կը ճամբես, կը սրղողցնես զանոնք, պնակներս կը կոտրես, գինիս կը խմես, եւ տակաւին կ'ըսես թէ բան մը չըրիր, ծունկի եկուր, չո՛ւտ:

Արաք. եւ Սար. — Ներէ՛, մօրաքոյր, այս անգամ:

Տիկ. Հո. — Դուք մի՛ խառնուիք իմ գործիս: (Շուշեանին) Ծունկի, կ'ըսեմ, քեզի:

Շուշ. — Տիկին, ես յանցանքներս կը ճանչնամ, սակայն զանոնք գոցել ուզելով աւելի ծանրացուցի: Չէ՛ք գիտեր թէ, Տիկին...

Տիկ. Հո. — Լռէ՛, գինով մը քեզի:

Շուշ. — Ոչ տիկին, չպիտի լռեմ, պէտք է գիտնաք թէ ձեզի անհաճոյ ըլլալու դժբախտութիւնն ինչպէս ունեցայ, յուսալով որ պիտի կրնայի ունենալ ձեզի հաճելի ըլլալու երջանկութիւնը:

Տիկ. Հո. — Լռէ՛, կ'ըսեմ կոր քեզի:

Շուշ. — Լեզուն կտրեալ ալ ըլլաք նորէն պիտի ըսեմ: Ես գիտէի թէ Տիկին Արշալոյսին եւ Իրեն տղուն ընկերութենէն չպիտի ախորժէիք... միտքս դրի որ ճամբեմ զինքը:

Տիկ. Հո. — Հա՛, ասո՛ր համար հոս է ըսիր, անտակ չէ՞:

Շուշ. — Այնչափ փութկոտ էի ձեզի հաճելի ըլլալու համար որ մէկ պարբերութեան տեղ ուրիշ պարբերութիւն մը գործածեցի: Ձեր դիտաւորութիւնը լաւ մը բացատրել չկարենալուս:

յուզմունքը եւ վախը . . . գլուխ աշնպէս մը դարձուցին որ լեզուս ալ մէկտեղ զարձաւ այդ շփոթութեան միջոցին :

Տիկ. Հո. — Ինչ որ ալ ըլլայ, դուն արժանի չես ինծի պէս կնկան մը և ասանկ տունի մը մէջ ծառայելու եւ վաղուընէ շուտը չիկայ ասկից պիտի երթաս :

Շուշան. — Որքան շնորհապարտ եմ ձեզի :

Տիկ. Հո. — Ինչպէ՞ս, շնորհապարտ ես ինծի :

Շուշ. — Անտարակոյս, քանի որ այսօրուընէ իսկ կրնայիք ճամբել գիտ :

Տիկ. Հո. — Գալով քու մօրաքեռորդուդ, Շուշանին, նորէն ես ան բերել պիտի տամ, բարի աղջիկ մըն է ան, քեզմէ հազար անգամ աւելի խելացի :

Շուշ. — Տիկին, խեղճ մօրաքեռորդիս որքան երջանիկ պիտի ըլլայ այս բարի լուրը իմանալով և իր կոտորած խեղճ ոտքերն ու թեւերը որքան երախտապարտ պիտի ըլլան ձեզի : (Ասրինկ կուգայ. Շուշան զայն տեսնելուն պէս կը դառնայ որպէս զի չի ճանչցուի) :

Ժ. ՏԵՍԱՐԱՆ

Տիկ. ՀոիֆՍ., ԱՐԱՔՍԻ, ՍԱԹԵՆԻԿ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ԱՏՐԻՆԷ

Ատր. — Սիրելի Տիկին Հռիփսիմէս, մօրեղբայրս խրկեց ինծի հասկնալու համար թէ գո՞հ էք ձեր նոր պզտիկ սպասուհիէն :

Շուշ. (Կամաց մը ձեռքը գլխուն ցանկով) . — Ա՛յ . . .

Տիկ. Հո. — Է՛յ շիտակը . . . գոհ եմ . . . այն աստիճանի գոհ եմ որ վաղը կը ճամբեմ կոր :

Ատր. — Ինչպէ՞ս, գոհ չէ՞ք այս պզտիկ չարածիէն : (Շուշանին դառնալով) Աշնպէ՞ս է :

Տիկ. Հո. — Եթէ գիտնաք թէ որքան հագեր, որքան մտածումներ ինծի պատճառեց ան, դուք իսկ պիտի ամչնաք, օրիորդ, դեռ քանի՞ օր եղաւ դալը :

Ատր. — Իրա՞ւ կ'ըսէք, մօրեղբայրս սակայն շատ լաւ կերպով յանձնարարեց զինքը. (Շուշանին՝ որ կռնակը իրեն դարձուցած է) ինծի դարձիւ նայիմ : (Շուշան կես մը կը դառնայ) Տե՛ս, կարծես թէ ինձմէ փախչիլ կ'ուզէ : (Կ'երթայ Շուշանին ֆով եւ ծնօթեմ բռնելով վեր կ'ընկ գլուխը. Շուշան գլուխը կը ծռէ դարձեալ . այս խաղ 2-3 անգամ կը կրկնուի) Սա՛նկ կեցիր նայիմ անգամ մը, դէմքդ տեսնեմ մէյ մը : (Դիտելով Շուշանը ուշադրութեամբ) Բայց իմ յանձնարարած սպասուհիս չէ աս, Տիկին :

Շուշ. (վրդոված). — Ես եմ, օրիորդ, իրաւ որ ես եմ:

ԱՏՐ. — Երբե՛ք, երբե՛ք, իմ յանձնարարած սպասուհիս մազերը դեղին են:

Տիկ. Հո. — Մազերը դեղի՞ն են . . . ի՞նչ կ'ըսես . . .

ԱՏՐ. — Եւ յետոյ անիկա Շուշանին բնաւ չի նմանիր, մինչդեռ աս, կարծես թէ քոյր կամ քեւորդի են:

Շուշ. — Ճիշդ է ազ. . . օրիորդ, Շուշանը իմ մօրաքրոջս՝ աղջիկն է, իմ հանգուցեալ հայրս իր հանգուցեալ մօրը եղբայրն էր, կամ, իր հանգուցեալ մայրը իմ հանգուցեալ հօրս քոյրն էր:

Տիկ. Հո. — Կը բաւէ, կը բաւէ, հասկցայ որ դուն . . . Ա՛հ խաբուեցայ՝ հէ՛. . . կայի՛ է դուն . . . պիտի տեսնես, երթամ Շուշանը հիմա կանչել սամ եւ նայինք անոր ներկայութեանը ինչ պիտի ընես եւ այն ատեն վա՛յ քեզի եթէ զիս խաբեցիր. եկէք, Ատրինէ (Շուշանին դառնալով) դուք ալ աղէկ մը դիտեցէք: (Ատրինէին, դուրս ելած միջոցին) Տեսնենք եթէ Շուշանին հետքերես բերենք ինչ պիտի ըսէ:

(Տիկ. Հո. վրէժով. եւ Ատրինէ դուրս կ'ելլեն)

ԺԱ. ՏԵՍԱԻՄԱՆ

ՇՈՒՇԱՆ, ՈԱԹԵՆԻԿԵՆ ԱՐԱՐՍԻ

Շուշ. — Ճար չկա՛յ . . .

Սար. — Յանցանքը քուկդ է, որի՞ հօգ:

Շուշ. — Եւ հիմա ինձի առանձի՞ն պիտի թողուք իմ այր դժբախտութեանս մէջ:

Արաքս. — Անտարակոյս:

Շուշ. — Ո՛չ չեմ Հաւատար, անպատճառ պէտք է որ . . .

Տիկ. Հո. ձայնը. — Արաքսի՛, Սաթենի՛կ:

Շուշ. — Եթէ ուզէք կրնաք զիս փրկել, որովհետեւ վաղը զիս պիտի ճամբէ:

Ձայնը. — Արաքսի՛, Սաթենի՛կ:

Արաքս. — Մօրաքոյրս կը կանչէ կոր, մնացածը վաղը ըսէ:

Շուշ. — Լաւ ուրեմն. մօրաքոյրը առտուն անկողնէն չելած դուք կանուխ մը հոս գտնուեցէք, կ'աղաչեմ, մի՛ ուշանաք, եւ ինչ րնելիքնիս պիտի ըսեմ:

Սար. — Այո՛, վաղն առաւօտ:

Ձայնը. — Արաքսի՛, Սաթենի՛կ:

Արաքս. — Ի՞նչ է մօրաքոյր, եկանք, եկանք: (Դուրս կ'ելլեն վազելով)

Ժ.Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՇՈՒՇԱՆ (առանձին)

Հիմա նախ պէտք է հասկնամ թէ իրօք Տիկին Հռիփսիմէն
մարդ զրկե՞ց զիս կանչել տալու համար :

Վերջ Բ. արարուածին

ԱՇԽԱՐՀԻՍ ԾՐՋԱՆԸ

ԵՐԵՔ ՅՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Բ.

Հիւանդանոցին մէջ մտերմացաւ ուրիշ հիւանդի մը հետ , որ
Եոթհամա երթեւեկող ամերիկեան շոգենաւի մը նաւապետն էր :
Այդ բարեկամին շնորհիւ ինքզինքը պետ կարգել տուաւ շոգե-
նաւին պաշտօնեաներուն վրայ : Իր խանդավառ բնաւորութենէն
ու անշահասիրութենէն ամէն ոք կը հմայուէր , և ամէնքն ալ
կ'ուզէին անոր բարեկամութիւնը շահիլ :

Ժան տը Ս... Ճարտնի մէջ է : Ֆրանսական պանդոկ մը կը
ներկայանայ և կ'առաջարկէ իր ապրուստը հոգալ չորս լեզու
խօսող թարգմանի պաշտօնը կատարելով : Անմիջապէս կ'ընդունին
առաջարկը . ամէն ուղեւորներու հետ կ'ըստնայ , ու բաւական
յաջողութիւն կը գտնէ , և որովհետեւ իր միջնորդ կը ծառայէր
ճարտնցի վաճառականներու , — աշխարհի առաջին վաճառական-
ները , — և իտալացի յանձնակատարներու միջև , քիչ ժամանակի
մէջ կ'որիկ գումար մը կը շահի : Չուզեր ստակ դիզել և Հոնկ-
Գոնկ կ'երթայ :

Հոն , անգլիացի պաշտօնատարներու ակումբի մը մէջ կ'ընդուն-
ուի իբր քարտուղար , և միտքը կուգայ թէ՛ իր երիտասարդու-
թեանը՝ Բառթիէ Լաթէնի մէջ գնդամուղի նշանաւոր վարպետ մըն
էր . նորանոր խաղեր կը կազմակերպէ , գրաւներ կը դնէ , և գրե-
թէ ակամայ՝ կարեւոր մրցում մը կը շահի :

Կը վախճայ որ հարստանալով ճամբորդութիւնը դադարեցնե-
լու կ'ստիպուի , գեղեցիկ առիթէ՛ մը օգուտ քաղելով՝ Կալկաթա
երթալու կը պատրաստուի :

Ուղեգիրն սուղ է և կործանիչ կ'ըլլայ մեր ուղեւորին համար :

Օգին գէշութիւնը նաւին անպիտանութեան հետ միանալով՝ շատ օրեր ծովուն վրայ մնալու կը դատապարտուի: Վերջապէս Կալկաթա կը հասնի՝ գրեթէ առանց մէկ ստակի: Երազելով կը պտակի Պէնկալի մայրաքաղաքին մէջ, մտածելով թէ տեղւոյն մեզմ կլիման ու օդը պիտի կշտացունէ՞ր գինքը: Գեղեցիկ պանդոկ մը տեսնելով՝ ներս կը մտնէ, իբր թէ հոն գիշերելու համար սենեակ մը պիտի ընտրէ: Մինչդեռ սպասաւորները պանդոկապետը կանչելու կ'երթան, ինքը կը մտնէ ուղեւորներուն սրահն և կը նշմարէ լուսանկարներու ցուցահանդէս մը, որոնք աւելի սքանչացողներ ունէին քան գնողներ, դատելով թուղթին գեղին գոյնէն, և հնդիկ ճանճերուն աղտեղութիւններէն:

Մեր ուղեւորին արուեստագիտական զգացումը կը զարթնու, լուսանկարները շատ գեղեցիկ են, միայն պանդոկին մարդոց անտարբերութիւնն ու լուսանկարչին անճարակ թուլութիւնը պէտք եղած վաճառումը չէին ապահովեր:

Սենեակ մը վարձելէ առաջ, ժան լուսանկարչին հասցէն կը հարցունէ, անմիջապէս կը գտնէ գայն, ու կը պախարակէ իր թուլութիւնն ու անփութութիւնը: Կ'սուսջարկէ պատուաւոր միջնորդչէքով մը Կալկաթայի այդ սքանչելի տեսարանները ծախել այն ուղեւորներուն, որոնք քսանը չորս կամ առաւելն քառասունը ութը ժամ կը մնան այդ քաղաքն, և ժամանակ չունենալով՝ երկար ժամանակ մնալ հոն, լոռանկարները կը տանին այն մտերիմներուն ու բարեկամներուն՝ որոնք իրենց պատմութիւնները լսելու կ'սպասեն:

Մեր յամառ փիլիսոփան՝ հարստութենէ հրապուրող մարդ չէր, իրեն ինկած չահը կ'առնէ, յետոյ նորէն ճամբայ կ'ելլէ: Կ'տնցնի Հնդկաստանի մէջէն և Պոմպայ կը հասնի:

Հոն, շուտով կը տեղեկայ թէ՝ շատ մը անշահ եւրոպացիներ մենաշնորհ րրեր են Քրանսական գիւնները և կեղծ վաճառանիչերով՝ ստորին գիւններ կը ծախեն: Յանդգնօրէն ինքզինքը Քրանսական գիւններու միջնորդ կը հռչակէ, բայց մէկ նմոյշ մը չունի ձեռքը. չարաշար աշխատելով՝ խաւարին մթերանոցներու մէջէ կը յաջողի գտնել: Քիչ օրուան մէջ այդ մարդոց խարդախութիւնը երևան կը հանէ, փայլուն ծանուցում մը կ'ընէ այն վաճառատան համար, ուր հաստատուած էր իբր արկղակալ: Իր վարպետին կիսակործան մթերանոցը յաճախորդներով կը լեցնէ, և իր գործն աւարտելէ ետքը՝ քիչ մը գինի կ'առնէ կէս մը ապառիկ կէս մը կանխիկ, ու Գահիրէ կը մեկնի:

Այն տեղ դիւրութեամբ կը ծախէ իր չապրանքը, հաշիւները կը կարգադրէ Պոմպայի տան հետ, քանի մը գիտական

ուղեւորութիւններ կ'ընէ, ներկայ կը գտնուի եգիպտացի կնոջ հազարաւոր տարուան մոմիաի մը գիւտին. կ'երթայ տեսնել բուրքերը, Սփինքսը, ուղտին շարժումը կը բաղդատէ փիղին շարժումին հետ, իր առեւտրական գործերէն ճիշդ այնքան դրամ վար կը դնէ, որքան պէտք էր մինչեւ Մարսիլիա ուղեգին վճարելու համար: Մէսաթըրիի շոգենաւ մը կը նստի և Բարիզ կը մտնէ յաղթական, ուր նամակ մը իրմէ առաջ գացած էր՝ իր գալուստը ծանուցանելով:

Բարեկամներ երկաթուղիի կայարանը իրեն կ'սպասէին, անոր զուարթ դէմքը, և առոյգ գոյնը տեսնելով՝ պահ մը իսկ չկասկածեցան թէ՛ հարստացած էր:

— Ե՛յ, տեսնենք, հարցուցին, ո՞ւր է միլիոնդ:

Ժան տը Ս... Ժպտեցաւ և ուսերը թոթուեց:

— Իմ միլիոններս հոս են ըսաւ, ճակտին զարնելով. տասն երկու ֆրանք ունէի երբ ֆրանսայէն մեկնեցայ, ահա՛ ունեցած ստակս:

Ինը ֆրանք հանեց գրպանէն:

Իրօք, աշխարհիս չըջանր երեք ֆրանքի նստած էր իրեն, բայց շատ բաներ սորված էր:

Այս ճշմարիտ պատմութիւնը պիտի աւրէի խճողելով զայն, բայց կրնար դիւցազներգութիւն մը գրուիլ անոր վրայ: Ժիւլ Վէռնի գլխիչը պէտք էր անճշմարտանման ըլլալու համար:

Գիտէ՞ք ինչու համար ուղեցի պատմել զայն: Թէև դիւցազնը ողջ ըլլայ:

Վասն զի, քանի մը ամսէ ի վեր է, նորէն ուղեւորութեան ձեռնարկած է՝ վերստին աշխարհիս չըջանը կատարելու համար ուրիշ կողմանէ, աւ ի շեղ, եւ Իսլանտայի ծովին մէջ չպիտի կարդայ գրածս:

Այս անգամ ո՞րչափ դրամ պուեր է:

Զպիտի համարձակիմ ըսել թէ՛ հարիւր ֆրանք ունի գրպանը, հակառակ բարեկամներուն թախանձանացը և առջի ուղեւորութեան փորձառութեանը:

ԼՈՒԻ ԻԻԼՊԱ



ՍԿԻՒՌՆ ՈՒ ՃՆՃՂՈՒԿԸ

(ՀԵՔԵԱԹ)

Օր մը սկիւռը իր մէջ չարութեան տրամադրութիւն մը զգալով, կուգայ ցնցել ծառին այն ճիւղն որուն վրայ ճնճղուկը թառած էր ու կ'ուզէր քիչ մը քնանալ:

— Խնդրեմ, մի՛ ընէք կ'ըսէր ճնճղուկը աղաչելով:

— Ձեզ արթուն պահելն ինծի համար մեծ հաճոյք մըն է, կը պատասխանէ եսասէր փոքրիկ սկիւռը:

— Ես ձեզի համար յօժար եմ ամէն բան ընելու, աւելցուց ճնճղուկը, միայն թէ զիս հանդարտ թող որ քիչ մը քնանամ:

— Լա՛ւ ուրեմն, ըսաւ սկիւռը, հիմա գետինը պիտի իջնամ, դուք քանի մը կաղին նետեցէք, որ տանիմ գետինն այն փոքրիկ ծակն, ուր այս ձմեռ պիտի քնանամ. եթէ այս ընէք, ձեզի քիչ մը ժամանակ կուտամ քնանալու:

Ճնճղուկը հաճեցաւ, և սկիւռը ծառին ճիւղէն վար իջաւ:

Հիմա տեսէք թէ ի՛նչ ըրաւ ճնճղուկը: Ծառին գագաթը բոյն մը ունէր, ուր երկու պզտիկ հաւկիթներ կային, փոխանակ աղւոր կաղին մը առնելով սկիւռին նետելու, մեր պարոն ճնճղուկը ամէնէ մեծ հաւկիթը կ'առնէ եւ մինչդեռ սկիւռը կը պօռար բերանը մեծ մեծ բանալով, որպէս զի շիտակ ակռաններուն մէջ նետէ՝ ճնճղուկը հաւկիթը շիտակ կը նետէ սկիւռին փափաքին համաձայն անոր բերնին մէջ:

— Վա՛յ, վա՛յ:

Հաւկիթը ուղղակի սկիւռին բերնին զարնուելով, կտոր կտոր կ'ըլլայ ու հաւկիթին ճերմկուցովն ու դեղնուցովը սկիւռին գլխէն մինչեւ ոտքերը կը պլչկէ, բայց աւելի գէշն այն էր որ աչքերն հաւկիթով լեցուած հազիւ կոյր մարդու մը չափ կրնար տեսնել:

Իսկ ճնճղուկը կը խնդար ըսելով. « ինծի հետ գէշ վարուելուդ համար, ատոր արժանի էիր » ու իր պզտիկ աչքերը գոցելով խորունկ քուն մը քաշեց:

Թարգմ. Անգ.

Յ. Ն. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՁԲՕՍԱՆՔ

ԻՆՔՆԻՐԵՆ ԿՏՐՈՒԱԾ ՏԱՆՁԸ

Ի՞նչ ընելու է դանակը՝ ճշգիւ դնելու համար տանձի մը ներքեւ, որ բարձր տեղէ մը կախուած ըլլալով հանդերձ՝ գոյ երկու

կտոր ըլլայ դանակին երկաթին վրայ, երբոր կապուած դերձա-
նին կրակ տան:

Բաւական է տանձը թաթիւել գաւաթ մը ջուրի մէջ և անմի-
ջապէս դուրս հանելով կախել բարձր տեղէ մը: Ջուրին քանի մը
կաթիլները տանձին վրայէ կ'սկսին կաթիլթել սեղանին կամ տախ-
տակամածին վրայ, հետեւաբար պէտք է ուշի ուշով դիտել այն
կէտն ուր կը հաւաքուին ջուրին կաթիլները: Այս նախապատրաս-
տութիւնները գաղտուկ պէտք է կատարել, որպէս զի եկող ան-
ձինք տանձը կախուած տեսնեն առաստաղէն, առանց իմաց տա-
լու ջուրին հնարագիտութիւնը: Ուզած ատեննիդ դանակը զե-
տեղեցէք ճիշդ այն տեղն, զոր նշանակած էք ջուրի կաթիլներուն
համաձայն, եւ ապահով եղէք որ տանձը անվրէպ պիտի իյնայ
դանակին բերնին վրայ եւ երկուքի բաժնուի:

Տանձը բռնող թելին կրակ աալու դիւրին միջոցն է վառուած
լուցկիով մը այրել թելը:

ՄՏԱՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԳԺՈՒԱՐ ԲԱԺԱՆՈՒՄ ՄԸ

Ընդարձակ գետին մը ծախու էր, որու մէջ կային 6 տուն եւ
7 հոր, եւ որ բաժնուած էր 16 բաժիններու:

Ընտանիքի հայր մը ասոնցմէ գնեց որոշեալ քիւով իւարու կից
եզող բաժիններ եւ ըստ սովորութեան զանոնք բաժնեց իր երեք
զաւակներուն մէջ:

Առջինէն առաւ հօրը ամբողջ գնածին կեսը եւ մեկ բաժինի մը
կեսը աւելի:

Երկրորդ տղան առաւ մնացեալին կեսը եւ բաժինի մը կեսը ա-
ւելի:

Երրորդ տղան առաւ մնացեալին կեսը եւ բաժինի մը կեսը ա-
ւելի:

Ասանկով երեք տղաքներն ունեցան երեք կալուածներ, որոնք
թէեւ անհաւասար ընդարձակութիւն ունէին, սակայն իւրաքանչիւրին
մէջ կար հոր մը եւ տուն մը, նոյնպէս եւ ոչ մեկ բաժին
կիսուած էր:

Մեր ընթերցողները կրնան արդեօք գուշակել թէ՛ ընտանի-
քին հայրը բանի՞ բաժին գնեց, իրեն ի՞նչ մնաց եւ զաւակներէն
իւրաքանչիւրին ի՞նչ ինկաւ:



ՆԱԽԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ամասիա. — Հ. էֆ. Խ. — Տպագրուած նամակագրութիւններն ու պահարանները Սամսոն, իսկ այցաքարդերը ձեր հասցէին շրջկուեցաւ: — Վիմատիպ 25 զրշ:

Տարեհիս. — Մրցման ներկայացուած գործերը ձեռագիր նէի՝ տպուած չեն: — Կարելի է ընդունուի, որովհետեւ քննիչներուն բարեհաճութենէն միայն կախում ունի:

Խարբերդ. — Յիշած նամակնիդ ձեռքերնիս չէ հասած: Անցեալ շաբթու ձեր ծրարով զրկուեցաւ 15—37 թիւերն: Ստացանք:

Մանիսա. — Գ. էֆ. Է. — Ստացանք, զրկուեցաւ:

Շապին Գարաֆիսար. — Գ. էֆ. Օ. — Շնորհակալ ենք ձեր ջանասիրութենէն: — Ձեր նամակի մէջ չէիք նշանակած ո՛ր թիւէն ուզելնիդ, ուստի ներկայ թիւէն կը զրկենք. եթէ կ'ուզէք 1—37 թիւերն ալ զրկենք: — Բաժնեգրինը կրնաք Մանտա բօսութով կամ ապահովագրեալ նամակի մէջ թղթատարութեան 35 զշ. Ի փուլ դնելով մեր հասցէին զրկել:

Նիկոմիդիա. — Յ. էֆ. Տ. Ա. — Ստացանք: Շնորհակալ ենք ձեր սրտագին բարեմաղթութիւններուն համար:

Էրպա՛ա. — Կ. էֆ. Գ. — Ձեր հրահանգին համեմատ կարգադրեցինք: Ստացանք միացորդն:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ, ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ Եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

Ն Շ Ա Ն Կ. ՊԵՐՊԵՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանրագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը խնդրենք որ բաժանորդագիրներէ և յանձնարարութիւններէ մընացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ տարւոյն ՈՒԹ ամիսը լրանալէն վերջը՝ դեռ չստ տեղեր սոյնօրինակ հաշիւներ անվճար կը մնան:

ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ-ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱՅԻԶ
Ն Շ Ա Ն Կ. ՊԵՐՊԵՐՍԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Մանգումէի տպարանին կից

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՐԱԹԱԿԱՆ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակի կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

ՊԱԼԵՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԳՏԱՐ ԼԵԱԳՐԻ ԴԷՍ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպառէ ամէն
սեսակ գիրքեր, ման-

ագրեր, հանդէսներ, օրագրականներ, հարսանիքի հրաւիրագիրներ, նամակագրութիւններ, այլաբանութիւններ, եւ սպառութեան վերաբերեալ ամէն սեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական 2000է աւելի պատկերները յանախորդաց արամադրութեան տակ են ձրի:

Անմրցելի մատուցութիւն եւ նշանակաւորութիւն:

Գաւառներէն ալ կ'ընդունի ամէն սեսակ յանձնարարութիւններ: